

Հաստատված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի  
խորհրդի\_18.03.2005թ. թիվ 7-2005 որոշմամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
Հաճախորդների վերաբերյալ  
տեղեկությունների գաղտնիության քաղաքականություն

2005թ.



---

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն քաղաքականությունը սահմանում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության /այսուհետև՝ Բանկ/ կողմից հաճախորդների վերաբերյալ Բանկի հավաքագրած տեղեկությունների պահպանման հիմնական սկզբունքները և այդ ուղղությամբ Բանկի կողմից ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումները:

1.2. Բանկի հաճախորդների շահերի առավել բարձր պաշտպանությունը բանկի հաճախորդների հետ հարաբերություններում հանդիսանում է բանկի առաջնային նպատակներից մեկը: Բանկը գիտակցում է, որ տեղեկատվության գաղտնիության իրավունքը Հաճախորդի կարևոր իրավունքներից է և որ հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների պատշաճ ձևով հավաքագրումն ու պահպանումը հանդիսանում է Բանկի նկատմամբ Հաճախորդների ունեցած վստահության կարևորագույն գրավական: Բանկը երաշխավորում է Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների բացառիկ գաղտնիությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

1.3. Բանկը պահպանում է Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ՀՀ օրենսդրության պահանջները՝ միաժամանակ հաշվի առնելով նաև գործարար շրջանառության միջազգայնորեն ընդունված սկզբունքները և սովորույթները:

## 2. Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության քաղաքականության սկզբունքները

### 2.1. Պատասխանատվություն

Բանկը պատասխանատու է հաճախորդի վերաբերյալ իր տրամադրության տակ գտնվող տեղեկությունների պատշաճ պահպանումն ապահովելու համար: Այդ պարտականությունը դրվում է Բանկի համապատասխան աշխատակցի/ աշխատակիցների վրա, որը/որոնք պատասխանատու են տեղեկատվության գաղտնիության քաղաքականության սկզբունքներին Բանկի համապատասխանությունն ապահովելու համար:

### 2.2. Նպատակների սահմանում

Բանկը սահմանում է այն նպատակները, որոնց համար պահանջվում են հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները նախքան համապատասխան տեղեկությունների հավաքագրումը, կամ դրանց հավաքագրման պահին: Տեղեկությունները հավաքագրվում են Բանկի կողմից սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ սահմաններում՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

### 2.3. Համաձայնություն



---

Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, օգտագործումը կամ երրորդ անձանց տրամադրումն իրականացվում է հաճախորդի համաձայնությամբ և նրան իրազեկ պահելով՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

#### **2.4. Օգտագործման և տրամադրման սահմանափակում**

Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները կարող են օգտագործվել կամ երրորդ անձանց տրամադրվել միայն այն նպատակներով, որոնց համար դրանք հավաքագրվել են, բացառությամբ հաճախորդի պահանջով մնան տեղեկությունների տրամադրման դեպքերի և օրենքով սահմանված դեպքերի: Հաճախորդի վերաբերյալ Բանկի հավաքագրած տեղեկությունները Բանկում թղթային և /կամ/ էլեկտրոնային եղանակով պահպանվում է օրենսդրությամբ սահմանված ժամկետի ընթացքում:

#### **2.5. Ճշգրտություն**

Բանկն ապահովում է Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ և ամբողջական պահպանումը: Հաճախորդների վերաբերյալ տեղեկություններում տեղի ունեցած փոփոխությունների դեպքում Բանկը պարբերաբար վերանայում է դրանք:

#### **2.6. Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների պատշաճ պահպանումը**

Բանկը ձեռնարկում է տեխնիկական այնպիսի միջոցներ և սահմանում է կազմակերպչական այնպիսի կանոններ, որոնք անհրաժեշտ են Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:

#### **2.7. Հաճախորդների հարցումների, բողոքների և առաջարկների ընդունումը**

Հաճախորդները կարող են ստուգել իրենց վերաբերյալ տեղեկությունների ճշգրտությունն ու ամբողջականությունը, անհրաժեշտության դեպքում կարող են պահանջել դրանցում կատարել փոփոխություններ և լրացումներ, ստանալ տեղեկանքներ՝ Բանկ ներկայացված համապատասխան դիմումների և հարցումների հիման վրա:

### **3. Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովման նպատակով Բանկի կողմից ձեռնարկվող միջոցառումները.**

3.1. Բանկը ձեռնարկում է Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունները պատշաճ պահպանելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ:

3.2. Հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովման նպատակով Բանկի կողմից ձեռնարկվող կազմակերպչական և տեխնիկական միջոցառումները սահմանվում են Բանկի գործադիր տնօրենի կողմից հաստատվող Բանկի ներքին ակտերով: